

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն N 1494

20 սեպտեմբերի 1999 թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՅՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինների ղեկավարների և մասնագետների որակավորման ստուգում անցկացնելու աշխատանքները կանոնակարգելու նպատակով *հրամայում էմ*:

Հաստատել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինների ղեկավարների և մասնագետների որակավորման ստուգում անցկացնելու կարգը (կցվում է):

Դ. Հարությունյան

*Հաստատված է
ՀՀ արդարադատության նախարարի
1999 թվականի սեպտեմբերի 20-ի
N 1494 հրամանով*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՅՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՑԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման (այսուհետ՝ ՔԿԱԳ) տարածքային բաժինների ղեկավարների և մասնագետների որակավորման ստուգումն անցկացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան:

2. ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների որակավորման ստուգումն անցկացվում է ՔԿԱԳ տարածքային բաժինների մասնագետների որակավորման ստուգումից առանձին:

Առաջինն անցկացվում է ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների որակավորման ստուգումը:

3. ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների և մասնագետների որակավորման ստուգման մասնակիցներին տրամադրվում են վկայականներ՝ որակավորման ստուգմանը մասնակցելու համար:

4. ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների և մասնագետների որակավորման ստուգման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով), բողոքարկման հանձնաժողովներ ստեղծում և նրանց գործունեության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:

5. Հանձնաժողովը՝

ա) կազմակերպում է թեստավորման աշխատանքները և հարցազրույցների վարումը.

բ) հաստատում է թեստավորման հարցերը.

գ) հաստատում է թեստավորման կանոնները.

դ) որոշում է թեստավորման վայրը, ժամանակը և տևողությունը.

ե) հաստատում է թեստավորման պահանջները բավարարելու պայմանները.

զ) բազմացնում է թեստավորման առաջադրանքները և ապահովում է դրանց գաղտնիությունը.

է) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին է ներկայացնում թեստավորման և հարցազրույցի արդյունքները՝ համապատասխան որոշումներ կայացնելու համար.

ը) կատարում է որակավորման ստուգման հետ կապված այլ աշխատանքներ և ընդունում է համապատասխան որոշումներ:

6. Հանձնաժողովի նախագահը՝

ա) ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները, հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը.

բ) կազմակերպում է թեստավորման առաջադրանքների, հարցերի (խնդիրների) մշակման աշխատանքները.

գ) ապահովում է թեստավորման առաջադրանքների պատվիրման ու նախապատրաստման աշխատանքները, ինչպես նաև դրանց գաղտնիությունը

դ) իրականացնում է հսկողություն թեստավորման ընթացքի նկատմամբ.

ե) իրականացնում է որակավորման ստուգման հետ կապված այլ աշխատանքներ:

7. ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների որակավորման ստուգմանը մասնակցում են ՔԿԱԳ տարածքային բաժինների վարիչները և ՔԿԱԳ տարածքային բաժինների իրավաբանական բարձրագույն կրթություն ունեցող վարիչների տեղակալները:

ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների որակավորման ստուգմանը կարող են մասնակցել նաև ՔԿԱԳ տարածքային բաժինների իրավաբանական բարձրագույն կրթություն ունեցող մասնագետները՝ իրենց ցանկությամբ:

8. ՔԿԱԳ տարածքային բաժինների մասնագետների որակավորման ստուգմանը մասնակցում են ՔԿԱԳ տարածքային բաժինների այն աշխատողները, ովքեր չեն մասնակցել ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների որակավորման ստուգմանը:

ՔԿԱԳ տարածքային բաժինների մասնագետների որակավորման ստուգմանը մասնակցում են նաև ՔԿԱԳ տարածքային բաժինների այն մասնագետները, ովքեր մասնակցել են ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների որակավորման ստուգմանը, սակայն չեն բավարարել թեստավորման և հարցազրույցի պահանջներին:

9. ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների և մասնագետների որակավորման ստուգումն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

10. ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների որակավորման ստուգման մասնակիցների համար թեստերը մշակվում են՝ պետական ծառայողների, քաղաքացիական կացության ակտերի, այդ ակտերի գրանցման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրական հետևյալ ակտերի վերաբերյալ նրանց գիտելիքները ստուգելու նպատակով՝

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության.

- Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի.

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (բաժիններ՝ 1-5).

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (գլուխներ՝ 2, 5, 6, 8, 9, 12, 26, 28, 32, 34).

- Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (ընդհանուր մաս՝ գլուխ 3, հատուկ մաս՝ գլուխներ 3, 8, 9, 10).

- Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի (գլուխներ՝ 31 և 32).

- «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

11. ՔԿԱԳ տարածքային բաժինների մասնագետների որակավորման ստուգման մասնակիցների համար թեստերը մշակվում են հայերեն լեզվից նրանց գրագիտությունը և ձեռագրային ընթեռնելիությունը ստուգելու նպատակով:

12. Թեստավորման առաջադրանքները բաղկացած են հարցերից և խնդիրներից: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա երեք կամ չորս ենթադրյալ պատասխան: Յուրաքանչյուր հարց (խնդիր) պետք է ունենա մեկ միանշանակ պատասխան:

13. Թեստավորման ընթացքում մասնակիցներին արգելվում է օգտվել որևէ օրենսդրական կամ այլ նյութերից:

14. Թեստավորման առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, իսկ սխալ պատասխանը՝ 0 միավոր: Միավոր պատասխան են համարվում ոչ միայն ոչ ճիշտ պատասխանի նշումը, այլև մեկից ավելի պատասխանների նշումը, ինչպես նաև որևէ պատասխան չնշելը:

15. Թեստավորման արդյունքները հրապարակվում են ստուգման ավարտից հետո՝ հաջորդ օրը, ժամը 10.00-ին:

16. Թեստավորման արդյունքները բողոքարկվում են բողոքարկման հանձնաժողով: Բողոքարկումը թեստավորման առաջադրանքի որևէ հարցադրման կամ դրա ենթադրյալ պատասխանի ճշտության վիճարկումն է:

Մասնակցի բողոքը բավարարվելու դեպքում թեստավորման յուրաքանչյուր վիճարկվող առաջադրանքի վերաբերյալ նրա միավորներն ավելացվում են մեկ միավորով:

Եթե բողոքարկման հանձնաժողովը որոշում է բավարարել մասնակցի բողոքը և սխալ է համարում որևէ հարցադրում, ապա այդ որոշման հիման վրա տվյալ հարցին (խնդրին) սխալ պատասխանած բոլոր մասնակիցների միավորներն ավելացվում են մեկ միավորով:

17. Թեստավորման աշխատանքներին ներկա գտնվելու իրավունք ունեն գանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները՝ նախապես համաձայնեցնելով Հանձնաժողովի նախագահի հետ, ինչպես նաև Հանձնաժողովի որոշմամբ հրավիրված դիտորդները:

18. Թեստավորման պահանջները բավարարող մասնակիցները իրավունք են ստանում մասնակցելու հարցազրույցին:

19. ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարների որակավորման ստուգման մասնակիցների հետ հարցազրույցն իրականացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ կատարելու վերաբերյալ նրանց գիտելիքները և գործնական հմտությունները ստուգելու նպատակով:

20. ՔԿԱԳ տարածքային բաժինների մասնագետների որակավորման ստուգման մասնակիցների հետ հարցազրույցն իրականացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ նրանց իմացությունը և գործնական կարողությունները ստուգելու նպատակով:

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
20 սեպտեմբերի 1999 թ.
Պետական գրանցման թիվ 10299149